



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ապրիլի 2018 թվականի թիվ 50-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
<<ԱԶԱԶՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ >> ՊՈԱԿ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ
ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԱՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի թիվ 992-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ կետով, ի կատարումն ՀՀ Տավուշի մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 203-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ կետի՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության <<Աչաջրի առողջության կենտրոն>> ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար ստեղծել մրցութային հանձնաժողով, հետևյալ կազմով.

- Կ. ԱԴԱՄՅԱՆ - ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
- Ֆ. ԱՓԻՆՅԱՆ - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ (հանձնաժողովի քարտուղար)
- Ա. ՈՒԼԻԻՍԱՆՅԱՆ - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
- Ա.ԲԱԲԼՈՒՄՅԱՆ - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ:
- Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ
- Գ.ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆ - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ
- Հ.ՔՈՉԱՐՅԱՆ - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ. ԱԲՈՎՅԱՆ

